



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕՇԵՍ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱԴԱ

# ԿԱՆԱԴԱ

Ս.Բ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՈՐԵԱՅ ԹԵՐԹԿ



**GANTEGH**

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 22 Սեպտեմբեր 2019

129

DIMANCHE, 22 Septembre 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Բ Կիրակի Ձկնի Սրբոյ Խաչին  
Բարեկենդան Վարազայ Սրբոյ Խաչին

**2<sup>ÈME</sup> DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX  
PRÉMICES DE LA SAINTE CROIX DE VARAK**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՐՆԹՈՍՅԻՆԵՐՈՒՆ  
ԳՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (10.18-11.1-10)

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (10.1-12)

**Les lectures de la Bible d'aujourd'hui**

CORINTHIENS 10.18 -11.1-10

MARC 10.1-12

Պատարազիչ եւ քարոզիչ՝  
ԱՐՇ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ  
Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարազ ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ ժամը 12:30-ին

Requiem à 12h30

Մաղթանք Հանրապետական Հայաստանի Անկախութեան  
1:00-ին

Anniversaire de la Proclamation de l'Indépendance  
de l'Arménie à 1h00

DIACRES – ACOLYTES

*Chef de choeur: M. Sarkis Barsemian*

*Organiste: Mme Houry Manoogian*

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES  
DE DIMANCHE**



**THE SUNDAY  
READINGS**

## 2 ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ 10.18 -11.1-10

18.որովհետև գևահատելի է ո՛չ թե ան՝ որ ինքզինք կը յանձնարարէ, հապա ան՝ որ ՏԷ՛րը կը յանձնարարէ:

1Երանի՛ թե կարենայիք քիչ մը հանդուրժել իմ անմտութեանս. եւ իսկապէս՝ հանդուրժեցէ՛ք ինծի: 2Որովհետև նախանձախնդիր եմ ձեզի հանդէպ՝ Աստուծոյ նախանձախնդրութեամբ. քանի որ մԷ՛կ ամուսինի կշանեցի ձեզ, որպէսզի Քրիստոսի՛ ներկայացնեմ ձեզ՝ մաքրակենցաղ կոյսի մը պէս: 3Բայց կը վախնամ որ, ինչպէս օձը խաբեց Եւան իր խորամանկութեամբ, նոյնպէս ձեր միտքերը ապականին Քրիստոսի հանդէպ եղած պարզամտութենէն: 4Որովհետև եթէ մԷկը գար եւ քարոզէր ուրիշ Յիսուս մը՝ որ մենք չենք քարոզած, կամ ստանայիք ուրիշ հոգի մը՝ որ չէք ստացած, կամ ուրիշ աւետարան՝ որ չէք ընդունած, լաւ կը հանդուրժէիք այդպիսիին: 5Քանի որ ես կը սեպեմ թէ ոչինչո՛վ ես մնացած եմ գերագոյն առաքեալներէն. ճու թպէտ անվարժ եմ խօսքի մէջ, բայց ո՛չ՝ գիտութեամբ. սակայն ամէն բանի մէջ մենք մեզ ամբողջովին բացայայտեցինք ձեզի: 7Միթէ սխա՛լ գործած եղայ ես զիս խոնարհեցնելով՝ որպէսզի դո՛ւք բարձրանաք, քանի որ ձրի քարոզեցի ձեզի Աստուծոյ աւետարանը. 8կողոպտեցի ուրիշ եկեղեցիներ՝ թռչակ առնելով անոնցմէ, որպէսզի սպասարկեմ ձեզի: 9Ձեր մէջ ներկայ եղած ատենս՝ երբ կարօտութեան մէջ էի, ձեզմէ ո՛չ մէկուն բեռ եղայ. որովհետև Մակեդոնիայէն եկող եղբայրները լրացուցին ինչ որ կը պակսէր ինծի. եւ ամէն կերպով զգուշացայ ձեզի ծանրութիւն ըլլալէ, ու դարձեալ պիտի զգուշանամ: 10Քանի որ Քրիստոսի ճշմա-

րտուգիւնը իմ մէջս է, ո՛չ մէկը պիտի արգիլէ զիս այս պարծանքէն՝ Աքայիայի շրջանները:

## **ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 10.1-12**

1Կանգնելով՝ անկէ գնաց Յրեաստանի հողամասը, Յորդանանի միւս եզերքէն: Դարձեալ բազմութիւնները անոր շուրջ կը համախմբուէին, եւ ինչպէս սովորութիւն ունէր՝ դարձեալ կը սորվեցնէր անոնց: 2Փարիսեցիները եկան անոր քով ու հարցուցին՝ փորձելու համար զայն. «Արտօնուա՞ծ է մարդու մը՝ որ արձակէ իր կինը»: 3Ան ալ պատասխանեց անոնց. «Մովսէս ի՞նչ պատուիրեց ձեզի»: 4Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց ամուսնալուծումի վկայագիր մը գրել եւ արձակել»: 5Յիսուս պատասխանեց անոնց. «Ձեր սիրտին կարծրութեան համար գրեց ձեզի այդ պատուէրը. 6բայց արարչութեան սկիզբէն՝ Աստուած զանոնք արու եւ եգ ստեղծեց: 7՝Այս պատճառով մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, 8ու երկուքը պիտի ըլլան մէկ մարմին»: Ուստի ա՛լ երկու չեն, հապա՛ մէկ մարմին. 9ուրեմն մարդը թող չզատէ ինչ որ Աստուած իրարու միացուցած է»:

10Տունը՝ իր աշակերտները դարձեալ նոյն բանը հարցուցին իրեն: 11Ըսաւ անոնց. «Ո՛րք որ արձակէ իր կինը եւ ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ անոր դէմ: 12Ու եթէ կին մը արձակէ իր ամուսինը եւ ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ»:

## **2 CORINTHIENS 10.18-11.1-10**

18Car ce n'est pas celui qui se loue soi-même, qui est approuvé, mais c'est celui que le Seigneur loue.

1Plût à Dieu que vous me supportassiez un peu dans mon imprudence; mais encore supportez-moi. 2Car je suis jaloux de vous d'une jalousie de Dieu; parce que je vous ai unis à un seul mari, pour vous présenter à Christ [comme] une vierge chaste. 3Mais je crains, que comme

le serpent séduisit Eve par sa ruse, vos pensées aussi ne se corrompent, [en se détournant] de la simplicité qui est en Christ. 4Car si quelqu'un venait qui vous prêchât un autre Jésus que nous n'avons prêché; ou si vous receviez un autre Esprit que celui que vous avez reçu, ou un autre Evangile que celui que vous avez reçu, feriez-vous bien de l'endurer? 5Mais j'estime que je n'ai été en rien moindre que les plus excellents Apôtres. 6Que si je suis comme quelqu'un du vulgaire par rapport au langage, je ne [le suis] pourtant pas en connaissance; mais nous avons été entièrement manifestés en toutes choses envers vous.

7Ai-je commis une faute en ce que je me suis abaissé moi-même, afin que vous fussiez élevés, parce que sans rien prendre je vous ai annoncé l'Évangile de Dieu? 8J'ai dépouillé les autres Églises, prenant de quoi m'entretenir pour vous servir. 9Et lorsque j'étais avec vous, et que j'ai été en nécessité, je ne me suis point relâché du travail afin de n'être à charge à personne; car les frères qui étaient venus de Macédoine ont suppléé à ce qui me manquait ; et je me suis gardé de vous être à charge en aucune chose, et je m'en garderai encore. 10La vérité de Christ est en moi, que cette gloire ne me sera point ravie dans les contrées de l'Achai

### **MARC 10.1-12**

1Puis étant parti de là, il vint sur les confins de la Judée, au-delà du Jourdain, et les troupes s'étant encore rassemblées auprès de lui, il les enseignait comme il avait accoutumé.

2Alors des Pharisiens vinrent à lui, et pour l'éprouver ils lui demandèrent : est-il permis à un homme de répudier sa femme? 3Il répondit, et leur dit : qu'est-ce que Moïse vous a commandé? 4Ils dirent : Moïse a permis d'écrire la Lettre de divorce, et de répudier [ainsi sa femme]. 5Et Jésus

répondant leur dit : il vous a donné ce commandement à cause de la dureté de votre cœur. 6Mais au commencement de la création, Dieu fit un homme et une femme. 7C'est pourquoi l'homme laissera son père et sa mère, et s'attachera à sa femme; 8Et les deux seront une seule chair : ainsi ils ne sont plus deux, mais une seule chair. 9Que l'homme donc ne sépare pas ce que Dieu a joint.

10Puis ses Disciples l'interrogèrent encore sur cela même dans la maison. 11Et il leur dit : quiconque laissera sa femme, et se mariera à une autre, il commet un adultère contre elle. 12Pareillement si la femme laisse son mari, et se marie à un autre, elle commet un adultère.



### Հոգեւոր Հովիւի Պատգամը

«Մահը, թագաւորելով Ադամէն մինչեւ Զրիստոսի գալուստը, արդարութեան Արեգակի ծագելուն պէս խորտակուեցաւ»:

(Յովհաննէս Երզնկացի-Պլուզ)

Սիրելի՛ բարեկրօն հաւատացեալներ,  
Անցեալ Կիրակի նշեցինք Խաչվերացի տօնը՝ յիշելով Պարսկական գերութենէն Տիրոջ Խաչափայտի ազատա-

գրման եւ Երուսաղէմ վերադարձի հրաշալի իրադարձութիւնը, եւ ինչպէս հաստատուած է մեր Մայր Եկեղ-եցոյ օրացոյցին մէջ՝ իւրաքանչիւր տաղաւար տօնին յաջորդ օրը մեռելոց կը կոչուի, ուստի, անոր յաջորդ օրը Հայոց բոլոր եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Հոգեհանգստեան կարգ կամ Սուրբ Պատարագ՝ ի Զրիստոս ննջած մեր հաւատացեալ ու առաքինասէր հարազատներու յիշատակութեան համար: Եւ ըստ որուն որոշեցի ննջեցելոց վերաբերեալ խոհերս եւ մտածումներս փոխանցել որպէս օրուայ պատգամ :

Սիրելի՛ հաւատակից եղբայրներ եւ քոյրեր, «Աստուած մեռելներու Աստուածը չէ, այլ՝ ողջերու, որովհետեւ բոլորը անոր համար կենդանի են», - կ'աւետէ Տէր Յիսուս Զրիստոս Ղուկասի աւետարանին մէջ (20:38): Եւ մենք, որպէս յաղթանակած եւ յարուցեալ Աստուծոյ հետեւորդներ, գիտենք, որ կեանքը ամենեւին ալ տարիներու խեղճուկ թիւով սահմանափակուած երկրային այս ժամանակաշրջանը չէ՛, որ կ'աւարտի սառն ու անշունչ գերեզմանաքարով, այլ իրական, յաւիտենական կեանքը կը սկսի մահուան եզրագիծէն անդին, երբ մարդու անմահ ու աստուածապատկեր հոգին կ'ազատուի իր ժամանակաւոր թաղանթէն եւ կ'երթայ միանալու իր Արարիչին: Ասկէ աւելի յուսադրող պատկեր կ'երեւի դժուար է պատկերացնել, սիրելի՛ հաւատացեալներ, սակայն, եկուր եւ տես, որ մահուան լուրը, որ միշտ անսպասելի ու անժամանակ կը թուի, անասելի կը դառնացնէ եւ կը վշտացնէ մեր սիրտերը: Մահը կու գայ անորսալի գողի պէս եւ իր հետ կը տանի մեր թանկագին, մեր սիրելի մարդոց: Չաւակը կորսնցուցած ծնողքի արցունքները այդպէս ալ չեն չորնար մինչեւ կեանքին վերջը, նոյնպէս՝ իր ծնողքը կորսնցուցած զաւակի մը սրտին մէջ միշտ ալ կը մնայ որբութեան դառնութիւնը... Յաւի զգացումը կը մնայ բոլորին հոգիներուն մէջ, մէկուն մօտ քոյր, միւսին՝ եղբայր, ամուսին կամ կին անուններով տարբերելով միայն: Եւ եթէ հաւատքը տկարացած է մարդուն սրտին մէջ կամ ամենեւին կը բացակայի, ապա ան միսմիսակ կը մնայ

հոգին կրծող ու մաշող ցաւին հետ դեմ յանդիման: Իսկ քանի որ հոգին շատ անելի նուրբ է ու զգայուն՝ մարմնին համեմատութեամբ, ապա հոգեկան ցաւը բազմապատիկ անտանելի կը դառնայ մարմնական ցաւէն: Եւ մարդուն այլ ելք չմնար, քան խելագարուիլ ու յուսահատիլ այդ ցաւէն, կամ միխթարութեան ուղիներ փնտռել՝ զայն մեղմելու համար: Չեմ ուզեր թուարկել այն կարծեցեալ ուղիները, որոնք կը գտնէ անհաւատք մարդը, քանզի բոլորդ ալ գիտէք, սիրելիներ, որ անոնք խաբուսիկ են, փո՛ւճ ու ժամանակաւոր, եւ ի վերջոյ կը բերեն ցաւի այն նոյն կետին, որմէ, որ մարդը կը փորձէր ազատուիլ:

Այսօր, կ'ուզեմ խօսիլ այն իրական, միակ, ճշմարիտ ու յաւիտենական միխթարութեան մասին, որ միայն ճշմարիտ Աստուած կը պարգեւէ: Եւ զուր չէ, որ այս մասին որոշեցի ճիշդ Խաչվերացի մեռելոցին անդրադառնալ, քանի որ ինչպէս Աւանդութիւնը կը պատմէ՝ Տիրոջ Խաչափայտը իր ողջ ճամբուն վրայ աննկարագրելիօրէն կը միխթարէր եւ կ'ոգեւորէր բոլոր բարեպաշտ հաւատացեալներուն, եւ եթէ անցեալ Կիրակի եւս ներկայ գտնուեցաք Սուրբ Պատարագին եւ հաղորդակից դարձաք տօնին, ապա որոշ չափով հաղորդակից դարձաք նաեւ՝ եօթներորդ դարուն տեղի ունեցած այդ սքանչելի իրադարձութեան, սկանառես ըլլալով հաւատացեալներու ուրախութեան եւ միխթարուիլ այն իրական միխթարութեամբ, որ հնարաւոր է այդ ունենալ միայն ճշմարիտ հաւատքով:

«Սպասէ՛ Տիրոջը ու քաջալերուի՛ր, սիրտդ թող ամրապնդուի, Տիրոջը սպասէ», - կը սաղմոսերգէ Դաւիթ Սարգարէն (Սղմ. 26:14): «Օրհնեալ է Աստուած եւ Հայրը մեր Տէր Յիսուս Զրիստոսին, Հայրը գթութիւններու եւ Աստուած ամենայն միխթարութեան, որ կը միխթարէ մեզի մեր բոլոր նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք ալ կարողանանք միխթարել անոնց, որոնք ամէն տեսակ նեղութիւններու մէջ են, այն միխթարութեամբ, որուն շնորհիւ մենք կը միխթարուինք Աստուծամէ», - կ'ըսէ Պօղոս Առաքեալը Կորնթացիներուն ուղղուած իր երկրորդ նամակին մէջ (1:3, 4): «Բայց ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզի.



«լաւ է ձեզի համար, որ ես երթամ. որովհետեւ, եթէ ես չերթամ, Մխիթարիչը ձեր մօտ չգար. իսկ եթէ երթամ, անոր կ'ուղարկեմ ձեր մօտ», - կը քաջալերէ Տէր Յիսուս Քրիստոս (Յովհ. 16:7) եւ կ'աւելցնէ. «Ես իսկ եմ յարուփունս ու կեանքը. ան որ կը հաւատայ ինծի, թեպետ եւ մեռնի, կ'ապրի» (Յովհ. 11:25):

Տիրոջ սուրբ շրթունքներէն հնչած քաջալերանքի այս խօսքերը, Սուրբ Յովհաննէս Երջնչունով գրուած սուրբ գրային մեջբերումները անելի քան բաւական են, որպէսզի ճշմարիտ Քրիստոնեայի սիրտը առ Աստուած յոյսով եւ մեծ մխիթարութեամբ լեցուի: Այո՛, սիրելիներ, մահը կը բաժնէ: Ան կը բաժնէ մեզ մեր սիրելիներէն ու հարազատներէն՝ կորուստի անասելի ցաւ ու դառնութիւն պատճառելով, երազանքներ ու յոյսեր խորտակելով, սակայն պիտի յիշենք, որ նախ այդ սոսկ ժամանակաւոր բաժանում է, քանի որ բոլորս ալ յարութեան յոյսն ունինք, ապա՝ մենք երբեք միևնա՛կ չենք մեր ցաւին հետ: Մենք անսահման սիրող ու հոգատար Երկնային Հայր ունինք, որ Իր Սուրբ Յովհաննէս մխիթարութեամբ կը սրբէ մեր արտասուքը ու կը մեղմացնէ հոգիին ցաւը: Մենք անչափ գորովալից Երկնային Մայր ունինք, որ շարունակ կ'աղաչէ մեզի համար եւ կը բարեխօսէ իր Միածինին առջեւ, եւ որուն Սուրբ հայրերը, իրաւամբ, տառապեալներու Պատասպարան կը կոչուին: Եւ եթէ դուք երբեւէ մխիթարութեան ու սփոփանքի աղերսով դիմած էք Ողորմութիւններու Տիրոջը կամ Բարեգութ Աստուածածինին, ապա վստահաբար միանգամընդմիշտ զգացած էք ձեր ինդրանքին պատասխանը:

Հաւատացեալներէն մէկը կը պատմէր, որ երբ առաջին անգամ Երուսաղէմի մէջ, Տիրոջ գերեզմանին մօտ Սուրբ Պատարագի մասնակցած է, յանկարծ այնպիսի ուժով կը գիտակցի իր մեղաւորութեան մասին, որ սիրտը կը լեցուի այնպիսի ցաւով եւ հոգին այնպէս տակնուվրայ կ'ըլլայ, որ բաւական երկար ժամանակ անգուսպ կը հեկեկայ: Անոր համակած ցաւը երթալով կը զօրանայ, եւ որոշ ժամանակ վերջ կը զգայ, որ սիրտը ուր որ է պիտի պայթի այդ վիշտէն: Ոչ մէկ աղօթք այլեւս չի յիշեր, ուստի կերպով մը կը

հաւաքէ միտքը ու կ'աղաչէ Աստուծոյ՝ ըսելով. «Տէ՛ր, ողորմէ՛ ինծի եւ միսիթարէ՛, քանի որ սիրտս ուղղակի պատառ-պատառ կ'ըլլայ»։ Եւ կ'ըսէ, դեռ միտքը աւարտած չէր, երբ կը զգայ թէ՛ ինչպէս դադրած է արցունքներու հոսքը, եւ աննկարագրելի թեթեւութեան ու խաղաղութեան զգացումով կը լեցուի սիրտը։

«Խնդրեցէ՛ք Աստուծմէ, եւ ան կ'ու տայ ձեզի, փնտռեցէ՛ք եւ կը գտնեք, բախեցէ՛ք, եւ կը բացուի ձեր առջեւ» (Մտթ. 7:7)։

Տիրոջ օգնութիւնը երբեք չուշանար, սիրելի՛ հաւատացեալներ։ Բաւական է միայն մեր բեկեալ սիրտերը Անոր հոգածութեան յանձնենք եւ անմիջապէս կը զգանք, թէ ինչպիսի սիրով ու քաղցրութեամբ անոնք կը լեցուին։ «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզի կը հանգստացնեմ», - կը կանչէ Բարեգութ Տէրը (Մտթ. 11:28)։ Սակայն, այս բոլորէն առաջ պիտի յիշենք, որ մեր վիշտը սգալէն, մեր միսիթարութենէն շատ ավելի կարեւոր բան մը կայ, որ պիտի ընենք հարազատի մահուան դէպքին։ Անիկա անդադար աղօթքն ու ողորմութեան գործերն են անոր հոգիի հանգստութեան համար։ Եկեղեցին զուր չէ, որ կարգած է հոգեհանգստեան եւ մեռելոցի Պատարագները։ Քանի որ մեր հարազատները հոն նոյնքան եւ առաւել մեր ինամքին ու օգնութեան կարիքը ունին, որքան հոս՝ երկրային կեանքին մէջ։ Հոս անոնք ժամանակ ունէին իրենց մեղքերուն համար զղջալու եւ ապաշխարելու, իսկ հոն այդ հնարաւորութիւնը այլեւս չունին։ Ուստի, անոնց կը մնայ միայն յուսալ Եկեղեցւոյ եւ իրենց սիրող ու յիշող մարդոց աղօթք-ներուն, քանի որ մեր ջերմեռանդ աղօթքներն ու վասն հոգւոց իւրեանց ողորմութիւններն են, որ կ'երթան անոնց օգնելու օղային իշխանութիւններու միջոցով եւ Ամենա-կալին առջեւ կանգնելու ընթացքին։ Միայն անոնք ի զօրու են թեթեւցնելու անոնց վիճակը, սրբել այդ ոչ ծանր մեղք-երը, որոնց պատճառով չեն կրցած ապաշխարել։ Եւ ան շատ մեծ ու չափազանց կարեւոր օգնութիւն է մեր կողմէն տրուած, քանի որ սիրող սրտէ բխած աղօթքը ի զօրու է

Տիրոջ բարկութիւնը մեղմել եւ ողորմութիւն ակնկալել Անկէ:

Կը պատմեն, որ վանքերէն մէկուն մէջ վանականի մը մահէն ետք, թաքցուած ոսկի կը գտնեն անոր խցիկին մէջ: Վանահայրը կը կարգադրէ անոր վանքի գերեզմա-նոցէն դուրս թաղել եւ ոսկին ալ լեցնել գերեզմանին վրայ, որպէսզի միւս վանականներուն համար ալ խրատ ըլլայ: Սակայն երեսուն օր յետոյ վանահայրը անասելի ցաւ կը զգայ այդ մոլորեալ հոգիին համար եւ երեսուն հոգեհան-գատեան կարգ կը կատարեն ու բոլոր եղբայրներով ջեր-մեռանդօրէն կ'աղօթեն, որպէսզի անոր վիճակը քիչ մը թեթեւայ: Անկէ ետք, այդ վանականը տեսիլքով կը յայտ-նուի վանահօր եւ կ'ըսէ. «Մինչ այժմ սարսափելի կը տան-ջուէի, բայց հիմա լաւ եմ ու լոյսի մէջ կը գտնուիմ»:

Ահա՛, այս պատճառով շատ կարեւոր է, որ չմոռնանք մեր ննջեցեալ մտերիմներուն, սիրելի՛ հաւատացեալներ, այլ մեր անկեղծ աղօթքներով եւ անոնց անուևով եղած ողորմութիւններով աշխատինք թեթեւցնել այն վիճակը, որուն մէջ անոնք կը գտնուին: Եւ մենք ալ սուրբ եւ արդար կեանքի ձգտինք, մաքրենք մեր սիրտերն ու Տէր Յիսուս Զրիստոսին հրաւիրենք այնտեղ բնակելու, որպէսզի չվախնանք մահէն, այլ երբ գայ այս կեանքէն միւսը փոխադրուելու ժամանակը, մահը ապաշխարած գտնէ մեր հոգիներն ու դառնայ մեր սիրելի Տիրոջը միա-ւորուելու եւ Անոր երանելի լոյսին մէջ խաղաղութեամբ հանգրուանելու միջոցը միայն: Ամէն:

Օրհնութեամբ՝  
Տէր Դաւիթ Բահանայ Մարգարեան



**Monday, September 23, 2019**

**Commemoration of Sts. Mamas, Piliktimon  
and Simeon Stylite**

St. Mamas was born in the town Gangra, of the Province of Paphlagonia, in a poor Christian family. During persecutions against Christians his parents are imprisoned and exiled to Caesaria. While giving birth to her son, his mother passes away. A pious Christian woman adopts Mamas and brings him up. Already at the age of 15 he is imprisoned and subjected to severe torments for being a devout Christian and brave preacher. Overcoming the hardships he lives an isolated life on the Mountain Argos. St. Mamas devotes all his life to serving the poor, but is betrayed and handed over to the judge. After severe torments St. Mamas is killed by means of trident in 273 A. D. St. Piliktimon (Philomenos), known in Greek and Latin sources also by the name Filomenos, was a grain trader. For being Christian he is imprisoned during the period of persecutions by the King Avrelios. He is subjected to torments and is finally martyred in 274 A. D.



St. Simeon the Stylite was born in 390 A. D. in Caesaria. He has been a shepherd. One day he goes to the church and, not understanding the meaning of the Gospel passage read that day, asks about it an old man standing beside him. The old man explains him the meaning of the Gospel passage saying that the passage is about abstinence, that is, it is by means of ascetic way of life, deprivations and fasting that the people should deserve the heavenly kingdom. Thinking over the old man's words Simeon leaves



for the Hata Province, of Syria, where he is isolated in a monastery for three years, after which he asks God to grant him the grace to preach and heal. Seeing that the visitors and the sick cause too much trouble to him, Simeon digs a deep dungeon, from where only his head was seen while preaching, and later he climbs up a high column. He lives without a shelter, only standing or kneeling during the day, and only taking Holy Communion as food once a week. For many years he stays on the column and preaches and heals many sick people by means of prayers.

## **ՏԱՐԵԿԱՆ ՊԱԶԱՐ**

Կազմակերպութեամբ

**ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ**

**Պատույ Յիւր՝ Տիկին Զենիքա Սօգքէս**

**Շաբաթ 26 ԵՆ Կիրակի 27 Զոկտեմբեր 2019**

Առաւօտեան ժամը 10-Էն սկսեալ:

Մանրամասնութիւնները յաջորդ



## POUR NOS ENFANTS

Pour protéger notre héritage : Pour bâtir notre future

L'église St. Grégoire l'Illuminateur de Montréal a un besoin URGENT d'initier et d'exécuter des restaurations majeures à la structure de la bâtisse.

Les études architecturales et d'ingénierie ont conclu que la bâtisse de notre élégante église cathédrale de 90 ans, nécessitera pour les cinq (5) années prochaines d'importantes

restaurations de la maçonnerie de pierre sur son extérieur, des supports des vitraux plombés des fenêtres dans son intérieur et d'autres modifications structurelles et ceux-ci requièrent un montant assez élevé. La phase 1 de ses travaux estimés à \$250,000 a déjà démarré.

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire.

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire.

## Շաբթուայ խորհրդածութիւնը

- Մի՛ դատեր եւ մի՛ նեղացներ մարդոց: Ինչ որ ալ անոնք ընեն քեզ, մի՛ ատեր ուել մէկուն: Իւրաքանչիւր անձ կը գործէ այնպէս, ինչպէս սորվեցուցած են անոր եւ ինչպիսին է իր խառնուածքը: Բոլորը չէ որ ունին բարութիւն եւ դատողութիւն:

**Յերոնիմոս Էգիւսացի**

- «Իւրաքանչիւր մարդ ունի իր առաջադրանքը երկրի վրայ: Ամէն տերեւ, ամէն խոտ, ամէն ծաղիկ ունի իր առաջադրանքը, որ պէտք է իրականացնէ: Մենք կ'աշխատինք, բայց Աստուած կը որոշէ, թէ ինչ տեղի կ'ունենայ մեր կեանքին մէջ եւ ինչպէս: Եւ երբ մենք շնորհակալ կ'ըլլանք Աստուծոյ մեր կարգավիճակին համար, ապա ամէն ինչ կը ստացուի մեր մօտ: Ոչինչ անտեսուած է, ամէն ինչ կարելոր է»:

**Թադիոս վրդ. Վիդովնիցքի**

### ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- Իմ կեանքիս փորձառութիւնը համոզած է զիս, որ պակասութիւններ չունեցող մարդիկ շատ քիչ արժանիքներ ունին:  
Աբրահամ Լինգոլն, ԱՄՆ 16-րդ նախագահ
- Կեանքը՝ ինչպէս հեծանիւ քշելը: Որպէսզի պահես հաւասարակշռութիւնդ, պէտք է անընդհատ շարժում ընես:  
Ալպերտ Այնշտայն
- Համբերութիւնը ողջ կեանքին հարստութիւնն է:  
Ճաբոնական իմաստութիւն

**ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**



**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ  
ԿԻՐԱԿԻ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019**

Տ. եւ Տիկ. Եղիայ Հաքիմեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Վահէ Օրջանեանի եւ զաւակներուն,  
Տիկ. Հուրի Հաքիմեանի եւ զաւակներուն,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ  
ծնողաց՝

**ԱՐԱՔՍԻ ՀԱՔԻՄԵԱՆԻ  
(ARAXIE HAKIMIAN)**

**Մահուան 40-ին առիթով:  
ԵՒ**

**ԿԱՐԱՊԵՏ ՀԱՔԻՄԵԱՆԻ  
(GARABED HAKIMIAN)**

Մահուան 22-րդ տարելիցին առիթով:  
(Հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ):



Տօքթ. Հրայր եւ Մանուշ Տէր Գեորգեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կը խնդրեն իրենց սիրեցեալ մօր՝  
**ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ  
(DIKRANOUHIE ANGALATIAN)**



Մահուան 5-րդ տարելիցին առիթով  
Իրենց սիրեցեալ եղբօր՝  
**ՅԱԿՈՒՐ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ**  
(HAGOP ANGALADIAN)

Մահուան 10-րդ տարելիցին առիթով  
Իրենց սիրեցեալ մօրաքրոջ՝  
**ՌԵԴԷՔՔԱ ՊՈՅԱՃԵԱՆԻ**  
(REBECCA BOYADJIAN)

Մահուան 11-րդ տարելիցին առիթով  
Իրենց սիրեցեալ հօր՝  
**ՕՆՆԻԿ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ**  
(ONNIK ANGALATIAN)

Մահուան 14-րդ տարելիցին առիթով  
Ինչպէս նաեւ՝  
**ԱՆԿԱԼԱԹԵԱՆ ԵՒ ՊՈՅԱՃԵԱՆ**  
(ANGALATIAN & BOYADJIAN)

Գերդաստաններու համայն ննջեցելոց  
հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Արսինէ Փիլիկեան Աղդարեանի,  
Տօքթ. Հուրիկ Աղդարեանի,  
Պր. Վիգէն Աղդարեանի եւ զաւակներուն,  
Եւ համայն Փիլիկեան, Աղդարեան, Փելթեքեան  
եւ Սարեան ընտանիքներու,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կը խնդրեն իրենց սիրեցեալ եղբայրներուն եւ  
մօրեղբայրներուն՝  
**ՓՐՈՑ. ՅՈՎԷՀԱՆՆԷՍ**  
**ՓԻԼԻԿԵԱՆԻ**

(PROF. HOVAHANNES PILIGIAN)

ԵՒ

**ՓՐՈՑ. ԽԱՉԻԿ ՓԻԼԻԿԵԱՆԻ**

(PROF. KHATCHIG PILIGIAN)

(մահացած Լոնտոն)

Մահերուն 40-ին առիթով



Տիկ. Նատիա Կեօքճեանի եւ ընտանիքին,  
Թամարայի, Սաղայի, Քաթրինայի, Տիգրանի,  
Լեւոնի, Արաքսիի, Գարօլինի, Բաթրիշեայի,  
Եաննիքի, Սագոյի, Նաթաշայի, Քէթիի, Սօնայի,  
Նորայի եւ համայն գերդաստաններու,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կը ինդրեն իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր,  
մեծ հօր, եղբօր եւ Հօրեղբօր՝

**ՏՕՔԹ.**

**ՍԵՂԻՄԿ ԳՐԻԳՈՐ**

**ԿԷՕՔՃԵԱՆԻ**

(DR. SETRAK KRIKOR GEUKJIAN)

Մահերուն 40-ին առիթով



Տ. եւ Տիկ. Տէյվ եւ Արտէմիա Ֆիշըրի,  
Տ. եւ Տիկ, Սարգիս եւ Անուշ Մարաշլեանի,  
Տ. եւ Տիկ. Զարեհ եւ Ռուլա Մարաշլեանի,  
եւ թոռները՝ Տ. եւ Տիկ. Գեորգ եւ Ճեսիքա  
Մարաշլեանի,  
Տ. եւ Տիկ. Նուարդ եւ Տօմինիք Մարաշլեանի,  
Օրդ. Արտէմիա Մարաշլեանի,  
Պր. Ասպետ Զաքարեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց, մեծ  
ծնողաց եւ հարազատներուն՝

**ԳԷՈՐԳ ԵՒ ԱՐԱՔՍԻ**

ՄԱՐԱՇԼԵԱՆՆԵՐՈՒ  
(KEVORK & ARAXI MARESHIAN)

ԵՒ

ՄԱՐԳԻՍ, ՅԱԿՈԲ ԵՒ ՄԱՐԹԱ

ՄԱՐԱՇԼԵԱՆՆԵՐՈՒ

(SARKIS, HAGOP,

& MARTHA

MARESHLIAN)

Ինչպէս նաեւ

ԱՐԹԻՆ ԵՒ ՀՌԻՓՍԻՄԷ

ՊՈՅԱՃԵԱՆՆԵՐՈՒ

(ARTIN & HRIPSIME BOYADJIAN)

հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Մարի Աղազարեանի եւ ընտանիքին,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ քոյրերուն եւ եղբօր՝

ԱԶԱՏՈՒՀԻ ՇԱՀԻՆԵԱՆԻ

(AZADOUHI CHAHINIAN)

(մահացած Պրազիլ)

ՄԻՐԱՆՈՒՇ ԱՂԱԶԱՐԵԱՆԻ

(SIRANOUCHE AGHAZARIAN)

ԱՐԱՔՍԻ ՄԱՐԱՇԼԵԱՆԻ

(ARAXIE MARESHLIAN)

ԵՒ

ՓԱՆՈՍ ՊՈՅԱՃԵԱՆԻ

(PANOS BOYADJIAN)

հոգիներուն ի հանգիստ



Օրդ. Թագուհի Աղազարեանի  
եւ ընտանիքին,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց եւ  
եղբայրներուն՝  
**ԿԻՐԱԿՈՍ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ**  
**ԱՂԱԶԱՐԵԱՆՆԵՐՈՒ**  
(GIURAGOS & AROUSIAG AGHAZARIAN)  
**ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՃԷՔ, ՆՈՒՊԱՐ**  
**ԵՒ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՍՐԿ. ԱՂԱԶԱՐԵԱՆՆԵՐՈՒ**  
(HOVHANNES, JACK, NOUBAR,  
&  
DN. HAMPARTZOUM AGHAZARIAN)  
Ինչպէս նաեւ  
**ՍԻՐԱՆ ԵՒ ԼՈՒՍԻՆ**  
**ԱՂԱԶԱՐԵԱՆՆԵՐՈՒ**  
(SIRAN & LOUSINE AGHAZARIAN)  
հոգիներուն ի հանգիստ





## **ՏՕՆԱՅՈՅՑ**

**ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱՐԹՈՒՄԱՆ - ՍԵՊՏԵՄԲԵՐ – SEPTEMBRE**

**23, Երկուշաբթի – Պահք:**

**Տօն Սրբոցն Մամասայ, Փիլիկտիմոսի եւ Սիմէոնի  
Սիւնակեցոյն**

**Lundi 23 – Fête de St Mamas, Philigdimon et Siméon le Stylite.**

**24, Երեքշաբթի – Պահք:**

**Տօն Սրբոց Կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ եւ  
Շուշանայ՝ դստերն Մեծին Վարդանայ:**

**Mardi 24 – Jeûne.**

***Fête des Stes vierges Pépronine, Mariana et de Chouchane, filles  
du Grand Vartan.***

**25, Չորեքշաբթի – Պահք:**

**Mercredi 25 – Jeûne.**

**26, Հինգշաբթի – Պահք:**

**Տօն Սրբոց Հայրապետացն Բաբաղամու,  
Անթիմոսի եւ Երանոսի**

**Jeudi 26 – Jeûne.**

***Fête des Saints patriarches Baralam, Anthimos et Eranos.***

**27, Ուրբաթ – Պահք:**

**Vendredi 27 – Jeûne.**

**28, Շաբաթ – Տօն Սրբոցն Գեորգայ**

**Քաջամարտիկ զօրավարին, Ադոկտոսի եւ Ռոմանոսի  
երգեցողին:**

**Samedi 28 – Fête du brave général St Georges, d'Adoktos et du  
chantre Romanos.**



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN  
ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**



Միրով կը յայտնենք, թէ  
Շաբաթ, 28 Սեպտեմբեր 2019-ի  
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան  
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի  
կատարուի Մոնթրէալի Մբ. Գրիգոր  
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները  
ներկայ գտնուելու հոգեպարար այս  
արարողութեան:

*Օրհնութեամբ՝  
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան*



**ՄԱՂԹԱՆՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 28-ՐԴ  
ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ**

**ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ՝  
ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ**  
Առաջնորդ, Գանատահայոց Թեմին



**Յաւարտ Ս. ԵՆ Ամմահ Պատարագի  
ՄԱՂԹԱՆՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ**

**Կիրակի, 22 Սեպտեմբեր 2019**

<b>Առաւօտեան Ժամերգութիւն</b>	<b>09:30</b>
<b>Սուրբ Պատարագ</b>	<b>10:30</b>
<b>Հոգեհանգստեան Պաշտօն</b>	<b>12:30</b>
<b>Հանրապետական Մաղթանք</b>	<b>1:00</b>

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax:  
(514) 279-8008 / [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ Կիրակի, Սեպտեմբեր 8-ին նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը մեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացները.

1. Հայոց լեզու
2. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ
3. Մանկապատանեկան երգչախումբ
4. Շախմատ (ճատրակ)
5. Նկարչութիւն
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմուկ):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ վարժարանի դասընթացներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին:
- դասընթացներու համար պիտի գանձուի խորհրդանշական գումար՝ 1 փոքրիկի պարագային՝ ամիսը 15 տոլար, երկուքի պարագային՝ 25 տոլար, իսկ երեքի պարագային՝ 33 տոլար:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցեներով (e-mail)՝

[haykpetrosyan80@gmail.com](mailto:haykpetrosyan80@gmail.com) կամ [alinabezhanyan1@yahoo.com](mailto:alinabezhanyan1@yahoo.com):

**Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝**

**Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098**

